

ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏ ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՄՈՏ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 26-ԻՆ  
ԺԱՄԸ 14:00-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ՝ ԻՆՏԵԳՐՎԱԾ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

---

**քաղ. Երևան  
Մասնակցում էին՝**

- |                |  |
|----------------|--|
| Ա. Գևորգյան    | ՀՀ փոխվարչապետ, ՀՀ տարածքային կառավարման նախարար   |
| Ա. Ասատրյան    | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար  |
| Դ. Սարգսյան    | ՀՀ ֆինանսների նախարար  |
| Տ. Գևորգյան    | ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավարի տեղակալ  |
| Ա. Պետրոսյան   | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի առաջին տեղակալ  |
| Մ. Մկրտչյան    | ՀՀ կրթության և գիտության նախարարի տեղակալ  |
| Վ. Պողոսյան    | ՀՀ առողջապահության նախարարի տեղակալ  |
| Հ. Հունանյան   | ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության պետի տեղակալ  |
| Կ. Արեյան      | Երևանի քաղաքապետի տեղակալ  |
| Ա. Միրզախանյան | ՀՀ կառավարության աշխատակազմի սոցիալական վարչության պետ   |
| Է. Ավետյան     | ՀՀ ֆինանսների նախարարության «Արտասահմանյան ֆինանսական ծրագրերի կենտրոն» պետական հիմնարկի տնօրեն        |
| Վ. Ասլանյան    | ՀՀ կառավարության աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության առաջատար մասնագետ |

1. ՀՀ կառավարության 2012 թվականի հուլիսի 26-ի N 952-Ն որոշման կատարման ընթացիկ հաշվետվություն
  - 1.1 համալիր սոցիալական ծառայությունների 19 տարածքային կենտրոնների ընթացիկ գործարկման, ինչպես նաև ամբողջական գործարկման անհրաժեշտ պայմանների մասին
  - 1.2 հանրապետության մնացած տարածաշրջաններում համալիր սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոնների տեղակայման համար անհրաժեշտ շենքեր (շինություններ) տրամադրելու խնդիրների մասին
  - 1.3 «ՀՀ կառավարության 2012 թվականի հուլիսի 26-ի N 952-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մասին
  - 1.4 «Հայաստանի Հանրապետության վարչապետի 2012 թվականի սեպտեմբերի 29-ի N 941-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ՀՀ վարչապետի որոշման նախագծի մասին
  - 1.5 Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Սոցիալական պաշտպանության վարչարարության ծրագրի լրացուցիչ ֆինանսավորման (փոխառություն թիվ 7848 ԱՄ) շրջանակներում իրականացված աշխատանքների և նոր ծրագրի կանխավճարի մասին

---

(Ա. Ասատրյան, Տ. Սարգսյան)

### **Քննարկումներից հետո որոշվեց՝**

1) հանձնարարել ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարար Վ. Գաբրիելյանին՝ մեկշաբաթյա ժամկետում ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար Ա. Ասատրյանի հետ համատեղ՝ ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանին ներկայացնել ՀՄԾՏԿ-ների ցանկը, պահանջվող աշխատանքների ծավալները և ֆինանսական գնահատականը.

2) ընդունել ի գիտություն, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար Ա. Ասատրյանի զեկուցումը՝ ՀՀ կառավարության 2012 թվականի հուլիսի 26-ի N 952-Ն որոշման կատարման ընթացքի մասին.

3) հանձնարարել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար Ա. Ասատրյանին՝

ա. «ՀՀ կառավարության 2012 թվականի հուլիսի 26-ի N 952-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ՀՀ կառավարության և «Հայաստանի Հանրապետության վարչապետի 2012 թվականի սեպտեմբերի 29-ի N 941-Ն որոշման մեջ փոփոխու-

թյուններ և լրացում կատարելու մասին» ՀՀ վարչապետի որոշումների նախագծերը ներկայացնել ՀՀ կառավարության աշխատակազմ,

բ. Պետական պահպանության գլխավոր վարչության կողմից ՀՄԾՏԿ-ների կենտրոնացված պահպանության, սանիտարական նորմերի պահպանման (հավաքարար) և տնտեսական սպասարկման ֆինանսական գնահատականը, ըստ ֆինանսավորման աղբյուրների և ՀՄԾՏԿ-ների, ներկայացնել ՀՀ ֆինանսների նախարարություն,

գ. 2014 թվականի պետական բյուջեի նախագծի կազմման հայտերի ներկայացման ժամանակ հաշվի առնել նաև Պետական պահպանության գլխավոր վարչության կողմից ՀՄԾՏԿ-ների կենտրոնացված պահպանության, սանիտարական նորմերի պահպանման (հավաքարար) և տնտեսական սպասարկման համար նախատեսվող ծախսերը,

դ. ուսումնասիրել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունում իրավախորհրդատուի մեկ հաստիքի ձևակերպման նպատակահարմարության և արդյունավետության հարցը և ըստ այդմ ներկայացնել առաջարկություն,

ե. հաստիքների կրճատումների արդյունքում տնտեսված միջոցների հետագա տնօրինման ուղղությունների, ՀՄԾՏԿ-ների համար գրասենյակային նյութերի ձեռքբերման, ինչպես նաև գործուղումների համար նախատեսված ծախսերի հայտերը ներկայացնել ՀՀ ֆինանսների նախարարություն:

2. Ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգի ֆինանսավորման մոդելի նախագիծ

-----  
(Ա. Ասատրյան, Տ. Սարգսյան)

**Քննարկումներից հետո որոշվեց՝**

1) առաջարկել Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Կ. Արեյանին ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար Ա. Ասատրյանի հետ համատեղ այցելել փորձնական ծրագրի շրջանակներում գործող ՀՄԾՏԿ և ծանոթանալ ինտեգրված սոցիալական ծառայությունների մատուցման համակարգին.

2) ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար Ա. Ասատրյանին՝

ա. ինտեգրված սոցիալական ծառայությունների մոդելում ներառել նաև ՀՀ մարզպետներին կից միանվագ դրամական օգնության տրամադրման խորհուրդների գործառույթները,

բ. ՀՀ առողջապահության նախարար Դ. Դումանյանի հետ համատեղ քննարկել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության էլեկտրոնային տեղեկատվական բազան ՀՀ առողջապահության նախարարությանը հասանելի դարձնելու (տեղեկությունների փոխանակման) հնարավորության հարցերը,

գ. ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության պետ Վ. Գասպարյանի հետ համատեղ քննարկել ՀՀ ոստիկանության տեղամասային տեսուչների և ինտեգրված սոցիալական ծառայությունների կենտրոնների համագործակցության հնարավորության հարցերը.

դ. սոցիալապես անապահով ընտանիքների 16-18 տարեկան երեխաների համար կրթական ծրագրեր իրականացնելու մեխանիզմները ևս ներառել Ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգի ֆինանսավորման մոդելի նախագծում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԱՐՉԱՊԵՏ



ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ